NEWS ROYAL

## Ես կարևորում եմ նաև իրավապաշտպան կազմակերպությունների ներկայությունը Արցախում.



Արցախը, լինելով Եվրոպայի մաս, չպետք է հետ մնա որևէ իրադարձությունից, ՀԲԸՄ-ի կազմակերպած քննարկման ժամանակ լրագրողների հետ ճեպազրույցում ասաց Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը:

«Եվրոպայի ներգրավվածությունը կարևոր է առաջին հերթին քաղաքական առումով», - նշեց Արցախի ՄԻՊ-ը՝ հավելելով, թե 2016 թվականը կարելի է դիտել որպես բաժանարար գիծ՝ Արցախում եվրոպական մարդասիրական կազմակերպությունների ներգրավվածության հարցում:

Ռուբեն Մելիքյանի խոսքով՝ դրանից հետո սփյուռքյան կառույցները մեծ ներդրում ունեն Արցախում, ակնկալիքն էլ՝ Եվրոպայի ներկայությունն է Արցախում:

«Ես կարևորում եմ նաև իրավապաշտպան կազմակերպությունների ներկայությունը Արցախում: Վստահ եմ, որ դա դրական դեր կունենա մեր երկրում», - նշեց նա:

ՄԻՊ-ն ասաց, թե մարդու իրավունքներն Արցախում ամեն կերպ փորձում են պաշտպանել եվրապական չափանիշներին համապատասխան. «Մենք, մեծ հաշվով, ուղիղ պարտավորվածություն չունենալով, լինելով չճանաչված պետություն, ամեն ինչ անում ենք, որպեսզի լինենք եվրոպական աշխարհամասի մաս»:

Պատասխանելով առաջիկա նախագահական ընտրություններին, Սահմանադրության փոփոխություններին վերաբերող հարցին, Ռուբեն Մելիքյանն ասաց, թե իր մանդատը մարդու իրավունքների

պաշտպանությունն է, և չի պատրաստվում մասնակցություն ունենալ քաղաքական պրոցեսներին:

Slaq.am - Լրատվական աղբյուր

Աղբյուր ՝ www.slaq.am

Published on 14-Jul-2017 12:36 Original source: NewsRoyal

NEWS ROYAL

**Եվրոպան կարող է օժանդակել Ղարաբաղին առանց խաղաղության համաձայնագրի կնքման, ինչպես Աբխազիայի կամ Հյուսիսային Կիպրոսի պարագայում. քննարկում**



Եվրոպական միությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ դեռևս հստակ քաղաքականություն չունի: ՀԲԸՄ կողմից «Ցանկանում ենք Եվրոպան Արցախում» ստորագրահավաք-արշավի քննարկման ժամանակ հայտարարեց ՀԲԸՄ Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը: Նա ասաց, որ ԵՄ-ն ԼՂ հետ համագործակցության ծրագիր է իրականացնում, ինչի նպատակը երկու ժողովուրդների միջև երկխոսություն ստեղծելն է: «Այս ծրագիրը չի փոխարինում Եվրամիության քաղաքականությունը Արցախի նկատմամբ: Եվրոպական միությունը պետք է ունենա քաղաքականություն, որը պետք է ավելի լայն լինի, քան այս ծրագիրը: Իսկ այս ծրագիրը, երբեմն, միայն արդարացում է ինչ-որ մարդկանց կողմից, որ մենք Ղարաբաղում ինչ-որ բան անում ենք»,- ասաց Ն. Դավիթյանը: Ըստ նրա՝ պետք է աշխատել, որ ներկայիս իրավիճակը ԵՄ կողմից ԼՂ նկատմամբ փոխվի: Նա հիշեցրեց, որ ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին, Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը և Եվրամիությունը ներկայացնող բարձրաստիճան այլ պաշտոնյաներ պատասխանել էին իրենց նամակ-հարցադրմանը, թե ո՞րն է ԵՄ քաղաքականությունը Ղարաբաղի նկատմամբ և նրանք պատասխանել էին,

որ ԵՄ-ն կսկսի գործել Ղարաբաղում, հենց լինի խաղաղության մասին համաձայնագիրը: «Հույս պետք է ունենալ, բայց 23 տարի է, մենք այդ հույսով սպասում ենք: Իսկ Աբխազիայում, Հյուսիսային Կիպրոսում և չճանաչված այլ պետություններում, ԵՄ-ն և ԵՄ կազմակերպություններ աշխատում են, մարդասիրական ծրագրեր ունեն:

Իսկ ինչո՞ւ Արցախում չեն անում»,- ասաց Նիկոլա Դավիթյանը: Բելգիայի հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանն էլ շեշտեց, որ դժվար է Եվրամիության անունից ասել՝ ի՞նչ քաղաքականություն ունեն նրանք բոլորը: Նա ասաց, որ ԵՄ-ում կան հայամետ գործիչներ, չեզոք գործիչներ, որոնց վրա էլ իրենք աշխատում են: «Կան հայամետ գործիչներ, որոնց ազդեցությունը անսահմանափակ չէ: Իսկ չեզոք գործիչներն ասում են, որ բանակցություններ են ընթանում, 1994թ. հետո անսահմանափակ բանակցություններ կան ու հայտնի չէ, թե երբ դրանք կավարտվեն: Իմ պատկերացմամբ, հարցի լուծման շուրջ բանակցություններ չկան, այնտեղ մարդիկ են ապրում, ինչքան կարելի է աչք փակել դրա վրա, այդ մարդիկ ձգտում են եվրոպական արժեքներին, ուրեմն պետք է սպասել, թե երբ կլինի խաղաղության համաձայնագի՞րը»,- շեշտեց Մինասյանը:

Published on 14-Jul-2017 14:35 Original source: NewsRoyal

NEWS ROYAL

**Արդար չէ, որ Արցախը դուրս մնա եվրոպական ինստիտուտների ուշադրությունից. Արցախի ՄԻՊ**

---



Արցախի Հանրապետությունը փորձում է անել իրենից կախված ամեն բան, որպեսզի անվտանգության մակարդակը հնարավորինս բարձր լինի: Այս մասին, այսօր՝ հուլիսի 14-ին, Արցախին եվրոպական

մարդասիրական կազմակերպությունների կողմից օգնություն տրամադրելու ՀԲԸՄ միջոցառման ժամանակ, լրագրողների հետ զրույցում նշել է Արցախի մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը՝ անդրադառնալով Թալիշում բնակվողների համար վտանգավորության խնդրին:

Հարցին, թե որքանո՞վ է անվտանգ այսօր թալիշցիների համար՝ վերադառնալ իրենց բնակավայրերը, նա պատասխանել է. «Արցախի Հանրապետությունն իրենից կախված ամեն ինչ փորձում է անել, և շատ հաճախ դա դրսևորվում է շատ կոնկրետ և հստակ ծրագրված միջոցառումների միջոցով, որ անվտանգության մակարդակը լինի հնարավորինս բարձր, բայց մենք գիտենք՝ ում հետ գործ ունենք»:

Նրա խոսքով, անվտանգությունը սև ու սպիտակ երևույթ չէ. «Չի կարելի ասել՝ Ստեփանակերտում բացարձակ անվտանգ է, Թալիշում բացարձակ վտանգավոր է, այդպես չէ: Բնականաբար, շփման գծից հեռավորությունը որոշակի ազդեցություն ունենում է անվտանգության մակարդակի վրա»:

Անդրադառնալով այլ հարցերի՝ Ռուբեն Մելիքյանը նշել է, որ ամենևին արդար չէ, որ Եվրոպայի մաս հանդիսացող Արցախը դուրս մնա եվրոպական ինստիտուտների ուշադրությունից: Նա հավելեց, որ Եվրոպայի ներգրավվածությունը կարևոր է առաջին հերթին քաղաքական առումով:

Մելիքյանի խոսքով՝ 2016 թվականի ապրիլյան դեպքերը պետք է ընդունել որպես բաժանարար գիծ. «Այդ իրադարձություններից հետո արցախյան հիմնախնդիրների նկատմամբ սփյուռքյան կառույցների ուշադրության ակնհայտ մեծացում եմ տեսնում: Դա մասնավորապես վերաբերում է Հայկական բարեգործական ընդհանուր միությանը»:

Հարցին՝ արդյոք Արցախում մարդու իրավունքները պաշտպանվո՞ւմ են եվրոպական չափորոշիչներին համապատասխան, Ռուբեն Մելիքյանը պատասխանեց. «Մենք գոնե փորձում ենք: Մեր հնարավորությունների սահմանում անընդհատ փորձում ենք իրավական դիրքորոշումներն

արտահայտել, հղում անել եվրոպական իրավապաշտպան համակարգին: 2015 թվականից Արցախն իր համար պարտադիր համարեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան»:

Լուսանկարը՝ artsakhpress.am-ի

Աղբյուր ՝ www.1in.am

Published on 14-Jul-2017 15:06 Original source: NewsRoyal

NEWS ROYAL

**ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության՝ Արցախում գործելու համար. ՀԲԸՄ Եվրոպայի տնօրեն**

---



Եվրոպական միությունը չպետք է սպասի խաղաղության համաձայնագրի հաստատմանը՝ Արցախում իր ներգրավվածությունն ունենալու համար: ԵՄ-ն պետք է իր հստակ քաղաքականությունն ունենա Արցախի նկատմամբ: Այսօր լրագրողների հետ կայացած հանդիպմանն այդ տեսակետը հայտնեց Հայկական բարեգործական ընդհանուր միության Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը:

«Եվրոպական միությունը դեռևս չունի հստակ քաղաքականություն Արցախի հանդեպ: Կա ընդամենը մեկ նախաձեռնություն՝ Եվրոպական համագործակցություն Ղարաբաղում խաղաղության համաձայնագրի հաստատելու համար (The European Partnership for the Peaceful Settlement of the Conflict over Nagorno-Karabakh (EPNK), որն ունի տարեկան բյուջե, և ծախսվում է համագործակցություն ստեղծելու հայերի և ադրբեջանցիների միջև: Սակայն այս ծրագիրը շատ մարտահրավերներ ունի: Նամակ էր ուղարկվել՝ իմանալու, թե որն է Եվրոպական միության քաղաքականությունը

Արցախի հանդեպ, պատասխանել էին, որ Եվրոպական միությունը Արցախում կգործի միայն այն ժամանակ, երբ լինի խաղաղության համաձայնագիր»,-ասաց Նիկոլա Դավիթյանն ու հավելեց, որ ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության՝ Արցախում գործելու համար:

ՀԲԸՄ-ի հայաստանյան գրասենյակի գործադիր տնօրեն Դալար Կազանճյանի կարծիքով ևս՝ ԵՄ-ն պետք է ունենա քաղաքականություն Արցախի նկատմամբ, որը պետք է շատ ավելի լայն լինի, քան EPNK-ն է:

Բելգիայի հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանի համոզմամբ՝ կան հայամետ գործիչներ ԵՄ-ում, որոնց ազդեցությունն անսահմանափակ չէ: «Եվ այն պատճառաբանությունը, թե կլինի խաղաղության համաձայնագիր, ու ըստ դրա իրենք կկառուցեն համագործակցությունը, բավականին թույլ է: Չպետք է սպասել խնդրի լուծմանը, այլ հիմա արդեն պետք է սկսել համագործակցությունն Արցախում»,-եզրափակեց նա:

Աղբյուր ՝ www.1in.am

Published on 14-Jul-2017 19:06 Original source: NewsRoyal

## Ես կարևորում եմ նաև իրավապաշտպան կազմակերպությունների ներկայությունը Արցախում



Արցախը, լինելով Եվրոպայի մաս, չպետք է հետ մնա որևէ իրադարձությունից, ՀԲԸՄ-ի կազմակերպած քննարկման ժամանակ լրագրողների հետ ճեպազրույցում ասաց Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը:

«Եվրոպայի ներգրավվածությունը կարևոր է առաջին հերթին քաղաքական առումով», - նշեց Արցախի ՄԻՊ-ը՝ հավելելով, թե 2016 թվականը կարելի է դիտել որպես բաժանարար գիծ՝ Արցախում եվրոպական մարդասիրական կազմակերպությունների ներգրավվածության հարցում:

Ռուբեն Մելիքյանի խոսքով՝ դրանից հետո սփյուռքյան կառույցները մեծ ներդրում ունեն Արցախում, ակնկալիքն էլ՝ Եվրոպայի ներկայությունն է Արցախում:

«Ես կարևորում եմ նաև իրավապաշտպան կազմակերպությունների ներկայությունը Արցախում: Վստահ եմ, որ դա դրական դեր կունենա մեր երկրում», - նշեց նա:

ՄԻՊ-ն ասաց, թե մարդու իրավունքներն Արցախում ամեն կերպ փորձում են պաշտպանել եվրապական չափանիշներին համապատասխան. «Մենք, մեծ հաշվով, ուղիղ պարտավորվածություն չունենալով, լինելով չճանաչված պետություն, ամեն ինչ անում ենք, որպեսզի լինենք եվրոպական աշխարհամասի մաս»:

Պատասխանելով առաջիկա նախագահական ընտրություններին, Սահմանադրության փոփոխություններին վերաբերող հարցին, Ռուբեն Մելիքյանն ասաց, թե իր մանդատը մարդու իրավունքների պաշտպանությունն է, և չի պատրաստվում մասնակցություն ունենալ քաղաքական պրոցեսներին:

Published on 14-Jul-2017 13:28 Original source: Magnis.news

**Մեկնարկել է «Ցանկանում ենք Եվրոպան Արցախում» կոչով ստորագրահավաքը**




Հայաստանի Բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նախաձեռնությամբ մեկնարկել է ստորագրահավաք-արշավ, որը կոչ է անում Եվրամիությանը և եվրոպական մարդասիրական կազմակերպություններին ներգրավվել Արցախի ժողովրդի կյանքում: Այս մասին այսօր ՀԲԸՄ կողմից անցկացվող հանրային քննարկման ժամանակ հայտարարեցին նախաձեռնողները:

Ստորագրահավաքը, որն անցկացվում է «Ցանկանում ենք Եվրոպան Արցախում» կոչով, արդեն ունի 2000 հետևորդ, բայց արշավը դեռ շարունակվում է:

«Մեր նպատակն այն է, որ Արցախի ժողովուրդը բարեկեցիկ կյանք ունենա, որ Արցախը զարգանա: Մենք աշխատում ենք տարբեր կողմերի հետ, որպեսզի հասնենք այդ նպատակին, իրականացնեն մեր ռազմավարությունը: Ստորագրահավաք-արշավի Արցախի վերաբերյալ մեր ռազմավարության մի մասն է: Դուք գիտեք, որ ՀԲԸՄ-ն Սփյուռքում, հայկական տարբեր համայնքներում Արցախի համար կարողանում է նվիրատվություններ ու գումարներ հավաքել, բայց մենք ուզում ենք, որ Ղարաբաղյան հարցը դրվի միջազգային քննարկման»,- ասաց ՀԲԸՄ Հայաստանի ղեկավար Դալար Կազանջյանը:

Նրա խոսքով՝ Եվրամիության բոլոր երկրներում պիտի հասկանան, թե ինչ խնդիր կա Ղարաբաղում, ինչ է ներկայումս կատարվում և որ երկար տարիներ մարդկանց իրավունքները խախտվում են:

Բելգիայի հայկական կազմակերպությունների Ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանն էլ ասաց, որ ստորագրահավաքի նպատակը միայն նյութական աջակցությունը չէ, այն ավելի խորը նպատակներ ունի:

«Մենք ուզում ենք ներգրավել եվրոպական հասարակական կազմակերպությունների ղարաբաղյան հասարակական կյանք, որպեսզի նրանք համագործակցեն Արցախի ՀԿ-ների հետ»,- նշեց Մինասյանը:

Նա շեշտեց, որ Արցախը միակ չճանաչված պետությունն է, որտեղ ԵՄ-ն օգնություն չի տրամադրում՝ ի տարբերություն վիճահարույց այլ տարածքների, ինչպիսիք են Աբխազիան, Մերձդնեստրը, Հյուսիսային Կիպրոսը, որոնք ԵՄ-ից մարդասիրական և այլ օգնություն են ստանում:

Կազմակերպիչների կարծիքով՝ ԵՄ դիրքորոշումը Ղարաբաղի նկատմամբ փոխելը հնարավոր կլինի, եթե արշավին միանան ավելի մեծ թվով մարդիկ: Ծահնուր Մինասյանն ասաց, որ եվրոպական մի շարք ֆոնդեր կան, որոնք կարող են օգնել Ղարաբաղին:

«Միայն խիստ տեղեկացված մարդիկ գիտեն, որ գոյություն ունի Ղարաբաղ, չճանաչված պետություն, մենք ուզում ենք, որ նրանք իմանան այդ մասին, որ կան հասարակական ակտիվ գործունեություն ծավալող մարդիկ, կազմակերպություններ, որոնք ունեն համագործակցության կարիք»,- նշեց Ծ. Մինասյանը:

Լեռնային Ղարաբաղի Մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանն էլ ասաց, որ Եվրոպայի ներգրավումը Արցախում կարևոր է նախ քաղաքակրթության առումով: «Արցախը, լինելով Եվրոպայի մաս, ամենևին էլ արդար չէ, որ դուրս է մնացել եվրոպական ինստիտուտների, մարդու իրավունքների ինստիտուտների ուշադրությունից»,- ասաց Ռուբեն Մելիքյանը:

Նրա խոսքով՝ 2016թ. ապրիլյան իրադարձությունները բաժանարար գիծ դարձան, որովհետև Ղարաբաղի նկատմամբ սփյուռքյան կառույցների ուշադրությունը մեծացավ:

Published on 14-Jul-2017 14:36 Original source: Magnis.news

ARTSAKHpress

Արդար չէ, որ Արցախը դուրս մնա եվրոպական ինստիտուտների ուշադրությունից. Ռուբեն Մելիքյան

**Արցախում Եվրոպայի ներգրավվածությունը կարևոր է նախևառաջ քաղաքակրթական պատճառներով, և ամենևին արդար չէ, որ Եվրոպայի մաս հանդիսացող Արցախը դուրս մնա եվրոպական ինստիտուտների ուշադրությունից:**

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 14 հուլիսի, ԱՐՑԱԽՊՐԵՍ:** Արցախին եվրոպական մարդասիրական կազմակերպությունների կողմից օգնություն տրամադրելու ՀԲԸՄ այսօրվա միջոցառման ժամանակ այս մասին ասաց Արցախի մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը, հայտնում է Panorama.am-ը:

«2016 թվականի ապրիլյան դեպքերը պետք է ընդունել որպես բաժանարար գիծ: Այդ իրադարձություններից հետո արցախյան հիմնախնդիրների նկատմամբ սփյուռքյան կառույցների ուշադրության



ակնհայտ մեծացում եմ տեսնում: Դա մասնավորապես վերաբերում է Հայկական բարեգործական ընդհանուր միությանը: Ծրագրի հետ կապված ակնկալիքներից ամենամեծը հենց Եվրոպայի ներկայությունն է Արցախում»,- նկատեց Ռուբեն Մելիքյանը:

Արցախի ՄԻՊ-ի խոսքով, ինքը կարևորում է հատկապես եվրոպական իրավապաշտպան հանրության ներգրավվածությունն Արցախում, ինչը կբարձրացնի ինչպես ներքին կյանքում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը, այնպես էլ դրական ազդեցություն կունենա խաղաղության պահպանման տեսանկյունից:

Հարցին՝ արդյոք Արցախում մարդու իրավունքները պաշտպանվո՞ւմ են եվրոպական չափորոշիչներին համապատասխան, Ռուբեն Մելիքյանը պատասխանեց. «Մենք գոնե փորձում ենք: Մեր հնարավորությունների սահմանում անընդհատ փորձում ենք իրավական դիրքորոշումներն արտահայտել, հղում անել եվրոպական իրավապաշտպան համակարգին: 2015 թվականից Արցախն իր համար պարտադիր համարեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան»:

Արցախի ՄԻՊ-ը չպատասխանեց Արցախի Սահմանադրության փոփոխության վերաբերյալ հարցին՝ նշելով, որ իր մանդատը բացառապես մարդու իրավունքներով զբաղվելն է՝ անկախ քաղաքական դասավորվածությունից:

Միջոցառմանը ներկա ՀԲԸՄ Հայաստանի ղեկավար Դալար Կազանջյանն էլ իր հերթին նկատեց, որ թեև Հայկական բարեգործական ընդհանուր միությունը կարողանում է սփյուռքից Արցախի համար զգալի գումարներ և նվիրատվություններ հանգանակել, սակայն առավել կարևորում է միջազգային կառույցների ներգրավվածությունն Արցախի հասարակական կյանքում:

Published on 14-Jul-2017 13:32 Original source:Artsakh Press

ARTSAKHpress

ՀԲԸՄ-ն ձեռնամուխ է եղել եվրոպական մարդասիրական կառույցներին ուղղել դեպի Արցախ

**Հայկական բարեգործական ընդհանուր միությունն (ՀԲԸՄ) այսօր մամուլի ասուլիս և հանրային քննարկում էր կազմակերպել՝ ներկայացնելու ՀԲԸՄ Եվրոպայի ստորագրահավաք-արշավը:**




**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 14 հուլիսի, ԱՐՑԱԽՊՐԵՍ:** Ինչպես լրագրողների հետ զրույցում ասաց ՀԲԸՄ Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը, իրենց նպատակն է եվրոպական կառույցների օժանդակությունը բերել Արցախի ժողովրդին: Նա հիշեցրեց, որ ԵՄ-ն չճանաչված բոլոր հանրապետությունների հետ աշխատում է «Հարաբերություններ՝ առանց ճանաչում» ծրագրով, և եթե համաեվրոպական կառույցները ներկայացված չլինեն Լեռնային Ղարաբաղում, չեն կարող մոնիթորիգ իրականացնել, հայտնում է Panorama.am-ը:

«Սա քաղաքացիական նախաձեռնություն է, և եվրոպացիներն իրոք կարողեն օգնել Արցախին»,-ասաց Նիկոլա Դավիթյանը:

Բելգիայի հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանն էլ տեղեկացրեց, որ ստորագրահավաքը մեկնարկել է հունիսի 7-ից, մինչ այս պահը հավաքվել է 2 հազար ստորագրություն: Ստորագրահավաքին մասնակցել են 60 հասարակական-քաղաքական դեմքեր, այդ թվում՝ Եվրախորհրդարանի պատգամավորներ:

«Արցախում այսօր Եվրոպայի ներգրավվածությունը համարյա հավասար է զրոյի: Մեր այս նախաձեռնության նպատակը եվրոպական ՀԿ-ների ներգրավումն է Արցախում, փոխգործակցությունն արցախյան ՀԿ-ների հետ: Ուզում ենք հասկանալ՝ ինչ կարող ենք անել՝ թեկուզ փոխայցելությունների և տեղեկատվության փոխանակման առումով: Ենթադրվում է նաև ֆինանսական աջակցություն՝ չնայած՝ բուն նպատակը գումարը չէ: Եթե կան չճանաչված հանրապետություններին աջակցություն

ցուցաբերող համապատասխան եվրոպական հիմնադրամներ (իսկ այդպիսիք կան), ապա դրանք օգնություն են ցուցաբերում Հյուսիսային Կիպրոսին, Աբխազիային, Մերձդնեստրին և այլ չճանաչված հանրապետություններին: Մինչդեռ Արցախ նման կառույցներից զրո դրամ է մուտք գործում»,- ասաց նա:

Ծահնուր Մինասյանը տեղեկացրեց, որ ստորագրահավաք-արշավի աղյունքները կամփոփվեն աշնանը, սակայն այն շարունակական բնույթ կկրի: Նախատեսվում է Ացախին օգնելու թեմայի շրջանակներում կոնֆերանս կազմակերպել Եվրախորհրդարանում:

Published on 14-Jul-2017 14:02 Original source:Artsakh Press

ԹԵՐԹ.am

**[Մեկնարկել է «Ցանկանում ենք Եվրոպան Արցախում» կոչով ստորագրահավաքը (տեսանյութ)]**




Հայաստանի Բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նախաձեռնությամբ մեկնարկել է ստորագրահավաք-արշավ, որը կոչ է անում Եվրամիությանը և եվրոպական մարդասիրական կազմակերպություններին ներգրավվել Արցախի ժողովրդի կյանքում: Այս մասին այսօր ՀԲԸՄ կողմից անցկացվող հանրային քննարկման ժամանակ հայտարարեցին նախաձեռնողները:

Ստորագրահավաքը, որն անցկացվում է «Ցանկանում ենք Եվրոպան Արցախում» կոչով, արդեն ունի 2000 հետևորդ, բայց արշավը դեռ շարունակվում է:

«Մեր նպատակն այն է, որ Արցախի ժողովուրդը բարեկեցիկ կյանք ունենա, որ Արցախը զարգանա: Մենք աշխատում ենք տարբեր կողմերի հետ, որպեսզի հասնենք այդ նպատակին, իրականացնենք մեր ռազմավարությունը:

Ստորագրահավաք-արշավի Արցախի վերաբերյալ մեր ռազմավարության մի մասն է: Դուք գիտեք, որ ՀԲԸՄ-ն Սփյուռքում, հայկական տարբեր համայնքներում Արցախի համար կարողանում է նվիրատվություններ ու գումարներ հավաքել, բայց մենք ուզում ենք, որ Ղարաբաղյան հարցը դրվի միջազգային քննարկման»,- ասաց ՀԲԸՄ Հայաստանի ղեկավար Դալար Կազանջյանը:

Նրա խոսքով՝ Եվրամիության բոլոր երկրներում պիտի հասկանան, թե ինչ խնդիր կա Ղարաբաղում, ինչ է ներկայումս կատարվում և որ երկար տարիներ մարդկանց իրավունքները խախտվում են:

Բելգիայի հայկական կազմակերպությունների Ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանն էլ ասաց, որ ստորագրահավաքի նպատակը միայն նյութական աջակցությունը չէ, այն ավելի խորը նպատակներ ունի:

«Մենք ուզում ենք ներգրավել եվրոպական հասարակական կազմակերպությունների ղարաբաղյան հասարակական կյանք, որպեսզի նրանք համագործակցեն Արցախի ՀԿ-ների հետ»,- նշեց Մինասյանը:

Նա շեշտեց, որ Արցախը միակ չճանաչված պետությունն է, որտեղ ԵՄ-ն օգնություն չի տրամադրում՝ ի տարբերություն վիճահարույց այլ տարածքների, ինչպիսիք են Աբխազիան, Մերձդնեստրը, Հյուսիսային Կիպրոսը, որոնք ԵՄ-ից մարդասիրական և այլ օգնություն են ստանում:

Կազմակերպիչների կարծիքով՝ ԵՄ դիրքորոշումը Ղարաբաղի նկատմամբ փոխելը հնարավոր կլինի, եթե արշավին միանան ավելի մեծ թվով մարդիկ: Շահնուր Մինասյանն ասաց, որ եվրոպական մի շարք ֆոնդեր կան, որոնք կարող են օգնել Ղարաբաղին:

«Միայն խիստ տեղեկացված մարդիկ գիտեն, որ գոյություն ունի Ղարաբաղ, չճանաչված պետություն, մենք ուզում ենք, որ նրանք իմանան այդ մասին, որ կան հասարակական ակտիվ գործունեություն ծավալող մարդիկ,

կազմակերպություններ, որոնք ունեն համագործակցության կարիք»,- նշեց Ծ. Մինասյանը:

Լեռնային Ղարաբաղի Մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանն էլ ասաց, որ Եվրոպայի ներգրավումը Արցախում կարևոր է նախ քաղաքակրթության առումով: «Արցախը, լինելով Եվրոպայի մաս, ամենևին էլ արդար չէ, որ դուրս է մնացել եվրոպական ինստիտուտների, մարդու իրավունքների ինստիտուտների ուշադրությունից»,- ասաց Ռուբեն Մելիքյանը:

Նրա խոսքով՝ 2016թ. ապրիլյան իրադարձությունները բաժանարար գիծ դարձան, որովհետև Ղարաբաղի նկատմամբ սփյուռքյան կառույցների ուշադրությունը մեծացավ:




Published on 14-Jul-2017 13:46  Original source: Tert.am

ԹԵՐԹ.am

**Եվրոպան կարող է օժանդակել Ղարաբաղին առանց խաղաղության համաձայնագրի կնքման, ինչպես Աբխազիայի կամ Հյս. Կիպրոսի պարագայում. քննարկում**



Եվրոպական միությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ դեռևս հստակ քաղաքականություն չունի: ՀԲԸՄ կողմից «Ցանկանում ենք Եվրոպան Արցախում» ստորագրահավաք-արշավի քննարկման ժամանակ հայտարարեց ՀԲԸՄ Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը:

Նա ասաց, որ ԵՄ-ն ԼՂ հետ համագործակցության ծրագիր է իրականացնում, ինչի նպատակը երկու ժողովուրդների միջև երկխոսություն ստեղծելն է: «Այս ծրագիրը չի փոխարինում Եվրամիության քաղաքականությունը Արցախի նկատմամբ: Եվրոպական միությունը պետք է ունենա քաղաքականություն, որը պետք է ավելի լայն լինի, քան այս ծրագիրը: Իսկ այս ծրագիրը, երբեմն, միայն արդարացում է ինչ-որ մարդկանց կողմից, որ մենք Ղարաբաղում ինչ-որ բան անում ենք»,- ասաց Ն. Դավիթյանը:

Ըստ նրա՝ պետք է աշխատել, որ ներկայիս իրավիճակը ԵՄ կողմից ԼՂ նկատմամբ փոխվի:

Նա հիշեցրեց, որ ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին, Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը և Եվրամիությունը ներկայացնող բարձրաստիճան այլ պաշտոնյաներ պատասխանել էին իրենց նամակ-հարցադրմանը, թե ո՞րն է ԵՄ քաղաքականությունը Ղարաբաղի նկատմամբ և նրանք պատասխանել էին, որ ԵՄ-ն կսկսի գործել Ղարաբաղում, հենց լինի խաղաղության մասին համաձայնագիրը:

«Հույս պետք է ունենալ, բայց 23 տարի է, մենք այդ հույսով սպասում ենք: Իսկ Աբխազիայում, Հյուսիսային Կիպրոսում և չճանաչված այլ պետություններում, ԵՄ-ն և ԵՄ կազմակերպություններ աշխատում են, մարդասիրական ծրագրեր ունեն: Իսկ ինչո՞ւ Արցախում չեն անում»,- ասաց Նիկոլա Դավիթյանը:

Բելգիայի հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանն էլ շեշտեց, որ դժվար է Եվրամիության անունից ասել՝ ի՞նչ քաղաքականությունն ունեն նրանք բոլորը: Նա ասաց, որ ԵՄ-ում կան հայամետ գործիչներ, չեզոք գործիչներ, որոնց վրա էլ իրենք աշխատում են:

«Կան հայամետ գործիչներ, որոնց ազդեցությունը անսահմանափակ չէ: Իսկ չեզոք գործիչներն ասում են, որ բանակցություններ են ընթանում, 1994թ. հետո անսահմանափակ բանակցություններ կան ու հայտնի չէ, թե երբ դրանք կավարտվեն: Իմ պատկերացմամբ, հարցի լուծման շուրջ բանակցություններ չկան, այնտեղ մարդիկ են ապրում, ինչքան կարելի է աչք փակել դրա վրա, այդ մարդիկ ձգտում են եվրոպական արժեքներին, ուրեմն պետք է սպասել, թե երբ կլինի խաղաղության համաձայնագի՞րը»,- շեշտեց Մինասյանը:

Published on 14-Jul-2017 14:30 Original source: Tert.am

**EU seeks to promote dialogue with Nagorno-Karabakh - debate**



**The European Union does not have clearly outlined policies for Nagorno-Karabakh (Artsakh) at the moment, but it wishes to develop a real dialogue, the director of AGBU Europe said today, commenting on the EU's possible agenda with the country.**

Speaking at the public debate *We Want Europe in Artsakh*, Nicolas Tavitian said the Union is now implementing a special cooperation project in an effort to promote the said dialogue. "That project does not substitute the EU policies towards Artsakh. The European Union must have specific policies which should be broader than this particular project. This project is but a justification by certain people [to demonstrate] that we virtually do something in Karabakh," he noted.

Tavitian stressed the need of strong efforts towards changing the existing attitudes.

He also referred to a recent statement by high-ranking EU representatives (High Representative for Foreign Affairs and Security PolicyFederica Mogherini ,

Council of Europe President Donald Tusk etc) promising to undertake serious projects in the country "as soon as a peace agreement is in place".

"It is, certainly, important to have hopes, but we have been waiting with hope for 23 years now. In other unrecognized countries such as Abkhazia, Northern Cyprus etc. we see the EU, and EU institutions do real work; they even have humanitarian projects. So why don't they do the same in Artsakh?"

Shahnur Minasyan, a coordinator for the Armenian organizations in Belgium, said they mainly collaborate with pro-Armenian and politically neutral public and political figures in Europe to consider future policy plans.

"There are pro-Armenians whose influence is not absolutely limited. Those who are neutral highlight the negotiations which they say have been an open-ended process since 1994. My personal understanding is that there are no negotiations in essence. The people there strive for European values, so why wait until there is a peace agreement?" he asked.

Published on 14-Jul-2017 16:20 Original source: Tert.am

**Европа может поддержать Карабах без заключения соглашения о мире, как в случае Абхазии или Северного Кипра - обсуждения**



У Европейского союза пока что нет четкой политики в отношении Нагорного Карабаха. Об этом в ходе созванной сегодня пресс-конференции сказал глава европейского офиса AGBU (Всеобщего армянского благотворительного союза) Никола Тавитян.

Он сказал, что ЕС осуществляет с НК программу сотрудничества, цель которой заключается в создании диалога между двумя народами. «Эта программа не заменяет политику Евросоюза в отношении Арцаха. У

Европейского союза должна быть более широкая политика, нежели эта. А это программа иногда выступает только в качестве оправдания со стороны каких-то людей по части того, что они хоть что-то делают в Карабахе», - сказал Н. Тавитян.

По его словам, необходимо работать, чтобы изменить нынешнее отношение ЕС к Нагорному Карабаху.

Он напомнил, что Верховный представитель Европейского союза по иностранным делам и политике безопасности Федерика Могерини, председатель Европейского совета Дональд Туск и другие высокопоставленные представители ЕС ответили на их письмо-вопрос относительно того, какова политика ЕС в отношении Карабаха, отметив, что ЕС начнет действовать в Карабахе как только будет соглашение о заключении мира.

«Нужно питать надежду, но уже 23 лет мы ждем с этой надеждой. Но в Абхазии, на Северном Кипре и других непризнанных государствах действуют ЕС и институты ЕС, у них есть там гуманитарные программы. А почему они не работают тогда в Арцахе?», - спросил Никола Тавитян.

Published on 14-Jul-2017 16:28 Original source: Tert.am

NEWS.am

Չի կարելի ասել, որ Ստեփանակերտում բացարձակ անվտանգ է, Թալիշում՝ վտանգավոր. Արցախի օմբուդսմեն

Արցախի Հանրապետությունը փորձում է անել իրենից կախված ամեն



բան, որպեսզի անվտանգության մակարդակը հնարավորինս բարձր լինի: Այս մասին, այսօր՝ հուլիսի 14-ին, Արցախին եվրոպական մարդասիրական

կազմակերպությունների կողմից օգնություն տրամադրելու ՀԲԸՄ միջոցառման ժամանակ, լրագրողների հետ զրույցում նշել է Արցախի մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը՝ անդրադառնալով Թալիշում բնակվողների համար վտանգավորության խնդրին:

Հարցին, թե որքանո՞վ է անվտանգ այսօր թալիշցիների համար՝ վերադառնալ իրենց բնակավայրերը, նա պատասխանել է. «Արցախի Հանրապետությունն իրենից կախված ամեն ինչ փորձում է անել, և շատ հաճախ դա դրսևորվում է շատ կոնկրետ և հստակ ծրագրված միջոցառումների միջոցով, որ անվտանգության մակարդակը լինի հնարավորինս բարձր, բայց մենք գիտենք՝ ում հետ գործ ունենք»:

Նրա խոսքով, անվտանգությունը սև ու սպիտակ երևույթ չէ. «Չի կարելի ասել՝ Ստեփանակերտում բացարձակ անվտանգ է, Թալիշում բացարձակ վտանգավոր է, այդպես չէ: Բնականաբար, շփման գծից հեռավորությունը որոշակի ազդեցություն ունենում է անվտանգության մակարդակի վրա»:

Published on 14-Jul-2017 14:01 Original source: News.am

NEWS.am

Ruben Melikyan: Artsakh’ın Avrupa kurumlarının dikkati dışında kalması adil değil



Avrupa’nın parçası olan Artsakh’ın Avrupa kurumlarının dikkati dışında kalması adil değil. Beyan bugün 14 Temmuz’da Artsakh’a/Karabağ Avrupa insani yardım kuruluşları tarafından yardım tahsisine ilişkin Ermeni Genel Hayri Birliği (AGBU) etkinliği esnasında Artsakh insan hakları Ombudsmanı Ruben Melikyan’dan geldi, Melikyan bunun ilk elde siyasi anlamda önemine dikkat çekti.

Nisan 2016 olaylarını ayrım çizgisi olarak kabul etmek gerektiğini belirten Melikyan ″Bu hadiseler sonrasında Diaspora kurluşlarının Artsakh'ın sorunlarına yönelik alakası bariz şekilde artmaktadır. Bu özellikle AGBU'ya ilişkindir.″ dedi.

″Artsakh'ta insan hakları Avrupa standartlarında uygun olarak korunuyor mu?″ sorusuna Melikyan şu yanıtı verdi:

″Hiç olmazsa çaba gösteriyoruz. Olanaklarımız ölçüsüde sürekli hukuki tutum ifade etme, Avrupa insan hakları mevzuatına atıfta bulunuyoruz. 2015'ten itibaren Artsakh, Avrupa İnsan Hakları Konvansiyonunu kendis için zorunlu kabul etti.″

Published on 14-Jul-2017 14:25 Original source: News.am

ARMENPRESS
ARMENIAN NEWS AGENCY | SINCE 1918

# Եվրոպայի ստորագրահավաք-արշավը եվրոպական կազմակերպություններին կներգրավի Արցախի ժողովրդի կյանքում

Like 4 Tweet Pin it G+1 0 Համօգտագործել




14:12, 14 Հուլիս, 2017

ԵՐԵՎԱՆ, 14 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եվրոպայի ստորագրահավաք-արշավի նպատակն է Եվրամիության և եվրոպական այլ կառույցների ներգրավել Արցախի ժողովրդի կյանքում: Ակնկալվում են փոխայցելություններ, տեղեկատվության փոխանակում, ինչպես նաև ֆինանսական աջակցություն: Ստորագրահավաքին արդեն միացել են 2000 մարդ, որոնց թվում են 60 հասարակական-քաղաքական ճանաչված դեմքեր, եվրախորհրդարանի պատգամավորներ:

**«Արմենպրես»**-ի հաղորդմամբ, հուլիսի 14-ին կայացած ասուլիսում Բրյուսելից ուղիղ միացմամբ այս մասին խոսեցին **Արցախի մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը, Բելգիայի հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանը և ՀԲԸՄ Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը:**

«Արցախում այսօր միջազգային կազմակերպությունների ներգրավվածություն գրեթե չկա: Ստորագրահավաքի բուն նպատակը գումարային աջակցությունը չէ, այլ եվրոպական կազմակերպությունների ներգրավվածությունը Արցախի հասարակության կյանքում, ՀԿ-ների համագործակցությունը: Տեղեկատվության հասանելիության առումով ևս աշխատանքներ կան իրականացնելու, քանի որ Եվրոպայում շատ քչերը գիտեն Արցախի մասին: Փորձում ենք ԶԼՄ-ների միջոցով լուսաբանել, որ գոյություն ունի Արցախի Հանրապետություն, կան հասարակական ակտիվ գործունեություն ծավալող կառույցներ, որոնք ունեն համագործակցության կարիք»,-ասաց Շահնուր Մինասյանն ու հավելեց, որ առաջարկելու են փոխայցելություններ, ՀԿ-ների համագործակցություն:

«Եվրոպայի ներգրավվածությունը կարևոր է առաջին հերթին քաղաքական պատճառներով: Կարծում եմ, որ 2016-ի ապրիլյան դեպքերից հետո սփյուռքի կառույցների ուշադրության մեծացում է նկատվում Արցախի հիմնախնդրի հետ կապված: Ստորագրահավաքից ակնկալիքը եվրոպական կառույցների ներկայությունն է Արցախում»,-ասաց Ռուբեն Մելիքյանը:

Արցախի մարդու իրավունքների պաշտպանը կարևորեց հատկապես իրավապաշտպան հանրության ներկայությունը Արցախում, որը կմեծացնի մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը ներքին կյանքում, նաև իր դրական դերը կունենա խաղաղության հաստատման տեսանկյունից:

Նիկոլա Դավիթյանի խոսքով՝ Եվրամիությունը դերակատարություն ունի շատ այլ չճանաչված երկրներում՝ Հյուսիսային Կիպրոսում, Աբխազիայում: Կան հիմնադրամներ, որոնք աջակցում են այդ երկրներին, սակայն Արցախը չի ստանում նման աջակցություն: «Մենք ուզում ենք փոխել այս վիճակը և օժանդակություն բերել նաև Արցախի ժողովրդին»,-նշեց նա:

*Ստորագրահավաքը նախաձեռնել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը:*

Published on 14-Jul-2017 14:12 Original source: Armenpress

ARMENPRESS
ARMENIAN NEWS AGENCY | SINCE 1918

# Цель сбора подписей в Европе – привлечение участия ЕС и прочих европейских структур к жизни народа Арцаха

Like 0 Твитнуть Pin it G+1 0 Поделиться




14:12, 14 Июль, 2017

Цель сбора подписей в Европе – привлечение участия ЕС и прочих европейских структур к жизни народа Арцаха. Сбор подписей стартовал 7 июня, на данный момент собрано 2 тысячи подписей. В данном мероприятии приняли участие около 60 общественно-гражданских деятелей, депутаты Европарламента. Как передает **«Арменпресс»**, об этом в беседе с журналистами 14-го июля рассказали Защитник прав человека Арцаха Рубен Меликян, Координатор федерации армянских организаций Бельгии Шахнур Минасян руководитель европейского представительства ВАБС Никола Давитян и др.

Представители Всеобщего армянского благотворительного союза (AGBU) в ходе созванной сегодня пресс-конференции представили организованные европейским офисом AGBU акцию и сбор подписей.

Напомним, AGBU призывает Евросоюз и европейские гуманитарные организации принять участие в жизни народа Арцаха .

Глава европейского офиса AGBU Никола Давитян в беседе с журналистами представил детали программы «Европа во имя Арцаха», отметив, что их целью является способствовать содействию европейских структур и организаций народу Арцаха.

Он напомнил, что ЕС со всеми непризнанными республиками работает по программе «Вовлечение без признания», и, если общеевропейские структуры не будут представлены в НКР, то они не смогут проводить мониторинг.

«Это гражданская инициатива, и европейцы действительно могут помочь Арцаху», – отметил Н. Давитян.

Координатор федерации армянских организаций Бельгии Шахнур Минасян в свою очередь отметил, что сбор подписей стартовал 7 июня, на данный момент собрано 2 тысячи подписей. В данном мероприятии приняли участие около 60 общественно-гражданских деятелей, депутаты Европарламента.

«Вовлеченность Европы в Арцахе на сегодняшний день почти равна нулю. Цель данной инициативы – вовлечение европейских НПО в Арцахе, обеспечение их сотрудничества с общественными организациями НКР. Мы хотим понять, что можем сделать, хотя бы по части визитов и обмена информацией.

Предполагается также и финансовая поддержка, хотя основной целью, конечно, это не является. Если есть соответствующие европейские фонды, которые предоставляют финансовую поддержку непризнанным республикам (а таковые есть), то они оказывают поддержку Северному Кипру, Абхазии, Приднестровью и другим непризнанным республикам. Между тем, Арцах не получает от них никакого содействия», – отметил он.

Ш. Минасян также сообщил, что результаты сбора подписей и акции будут подытожены осенью сего года, однако данное мероприятие будет носить продолжительный характер. Планируется, что в рамках темы поддержки Арцаха в Европарламенте будет организована конференция.

Published on 14-Jul-2017 14:12 Original source: Armenpress

ARMENPRESS
ARMENIAN NEWS AGENCY | SINCE 1918

# Europe petition-campaign to engage European structures in life of Artsakh people

Like 0 Tweet Pin it G+1 0 Share 1




14:12, 14 July, 2017

YEREVAN, JULY 14, ARMENPRESS. The Europe petition-campaign aims at engaging the European Union and other European structures in the life of the people of Artsakh, reports Armenpress.

Mutual visits, information exchange, as well as financial aid are expected. 2000 people have already joined the petition, among which there are 60 famous public-political figures, as well as MEPs.

Ombudsman of Artsakh Ruben Melikyan, Common Coordinator of the Federation of Armenian organizations of Belgium Shahnour Minasyan and AGBU Europe Director Nicolas Tavitian talked about this initiative during a press conference on July 14.

"Today there is almost no engagement of international organizations in Artsakh. The main goal of the petition is not the financial aid, but the engagement of European structures in Artsakh's public life, as well as the cooperation of NGOs. In terms of availability of information, works also need to be done since few in Europe know about Artsakh. We try to report via media that the Republic of Artsakh exists, there are structures carrying out public activities that need to cooperate", Shahnour Minasyan said, adding that there are going to propose mutual visits, cooperation of NGOs.

"The engagement of Europe is important first of all for political reasons. I think after the April events of 2016 the Diaspora structures increased their attention on the Artsakh issue. The expectation from the petition is the presence of European structures in Artsakh", the Artsakh Ombudsman said. He attached importance to the presence of human rights community in Artsakh which will increase the level of human rights protection in domestic life and will play a positive role in terms of establishing peace.

Nicolas Tavitian said the EU plays role in many other unrecognized states, such as in Northern Cyprus, Abkhazia. There are foundations that assist those countries, however Artsakh does't receive such assistance. "We want to change this situation and assist also the people of Artsakh", Tavitian said.

*The petition has been initiated by the Armenian General Benevolent Union (AGBU).*

Published on 14-Jul-2017 14:12 Original source: [Armenpress]

Փաստ ինֆո

## [Եվրոպայի ստորագրահավաք-արշավը եվրոպական կազմակերպություններին կներգրավի Արցախի ժողովրդի կյանքում]




Եվրոպայի ստորագրահավաք-արշավի նպատակն է Եվրամիության և եվրոպական այլ կառույցների ներգրավել Արցախի ժողովրդի կյանքում: Ակնկալվում են փոխայցելություններ, տեղեկատվության փոխանակում, ինչպես նաև ֆինանսական աջակցություն: Ստորագրահավաքին արդեն միացել են 2000 մարդ, որոնց թվում են 60

հասարակական-քաղաքական ճանաչված դեմքեր, եվրախորհրդարանի պատգամավորներ:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ, հուլիսի 14-ին կայացած ասուլիսում Բրյուսելից ուղիղ միացմամբ այս մասին խոսեցին Արցախի մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը, Բելգիայի հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանը և ՀԲԸՄ Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը:

«Արցախում այսօր միջազգային կազմակերպությունների ներգրավվածություն գրեթե չկա: Ստորագրահավաքի բուն նպատակը գումարային աջակցությունը չէ, այլ եվրոպական կազմակերպությունների ներգրավվածությունը Արցախի հասարակության կյանքում, ՀԿ-ների համագործակցությունը: Տեղեկատվության հասանելիության առումով ևս աշխատանքներ կան իրականացնելու, քանի որ Եվրոպայում շատ քչերը գիտեն Արցախի մասին:

Փորձում ենք ԶԼՄ-ների միջոցով լուսաբանել, որ գոյություն ունի Արցախի Հանրապետություն, կան հասարակական ակտիվ գործունեություն ծավալող կառույցներ, որոնք ունեն համագործակցության կարիք»,-ասաց Շահնուր Մինասյանն ու հավելեց, որ առաջարկելու են փոխայցելություններ, ՀԿ-ների համագործակցություն:

«Եվրոպայի ներգրավվածությունը կարևոր է առաջին հերթին քաղաքական պատճառներով: Կարծում եմ, որ 2016-ի ապրիլյան դեպքերից հետո սփյուռքի կառույցների ուշադրության մեծացում է նկատվում Արցախի հիմնախնդրի հետ կապված: Ստորագրահավաքից ակնկալիքը եվրոպական կառույցների ներկայությունն է Արցախում»,- ասաց Ռուբեն Մելիքյանը:

Արցախի մարդու իրավունքների պաշտպանը կարևորեց հատկապես իրավապաշտպան հանրության ներկայությունը Արցախում, որը կմեծացնի

մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը ներքին կյանքում, նաև իր դրական դերը կունենա խաղաղության հաստատման տեսանկյունից:

Նիկոլա Դավիթյանի խոսքով՝ Եվրամիությունը ներկայացուցչություն ունի շատ այլ չճանաչված երկրներում՝ Հյուսիսային Կիպրոսում, Աբխազիայում: Կան հիմքնադրամներ, որոնք աջակցում են այդ երկրներին, սակայն Արցախը չի ստանում նման աջակցություն:

«Մենք ուզում ենք փոխել այս վիճակը և օժանդակություն բերել նաև Արցախի ժողովրդին»,-նշեց նա:

Ստորագրահավաքը նախաձեռնել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը:

Լուսանկարը՝ Armenpress-ի

Published on 14-Jul-2017 14:56 Original source: PastInfo

Times.am
Լուրեր և վերլուծություն

## Глава европейского офиса AGBU представил детали программы «Европа во имя Арцаха»




Представители Всеобщего армянского благотворительного союза (AGBU) в ходе созванной сегодня пресс-конференции представили организованные европейским офисом AGBU акцию и сбор подписей, передает Panorama.am.

Как отмечается, AGBU призывает Евросоюз и европейские гуманитарные организации принять участие в жизни народа Арцаха.

Глава европейского офиса AGBU Никола Тавитян в беседе с журналистами представил детали программы «Европа во имя Арцаха»,

отметив, что их целью является способствовать содействию европейских структур и организаций народу Арцаха.

Он напомнил, что ЕС со всеми непризнанными республиками работает по программе «Вовлечение без признания», и, если общеевропейские структуры не будут представлены в НКР, то они не смогут проводить мониторинг.

«Это гражданская инициатива, и европейцы действительно могут помочь Арцаху», – отметил Н. Тавитян.

Координатор федерации армянских организаций Бельгии Шахнур Минасян в свою очередь отметил, что сбор подписей стартовал 7 июня, на данный момент собрано 2 тысячи подписей. В данном мероприятии приняли участие около 60 общественно-гражданских деятелей, депутаты Европарламента.

«Вовлеченность Европы в Арцахе на сегодняшний день почти равна нулю. Цель данной инициативы – вовлечение европейских НПО в Арцахе, обеспечение их сотрудничества с общественными организациями НКР. Мы хотим понять, что можем сделать, хотя бы по части визитов и обмена информацией.

Предполагается также и финансовая поддержка, хотя основной целью, конечно, это не является. Если есть соответствующие европейские фонды, которые предоставляют финансовую поддержку непризнанным республикам (а таковые есть), то они оказывают поддержку Северному Кипру, Абхазии, Приднестровью и другим непризнанным республикам. Между тем, Арцах не получает от них никакого содействия», – отметил он.

Минасян также сообщил, что результаты сбора подписей и акции будут подытожены осенью сего года, однако данное мероприятие будет носить

продолжительный характер. Планируется, что в рамках темы поддержки Арцаха в Европарламенте будет организована конференция.

Published on 14-Jul-2017 15:39 Original source: Times.am

ԵՐԿԻՐ yerkir.am

## Անվտանգությունը սև ու սպիտակ երևույթ չէ. Արցախի ՄԻՊ



Այսօր Արցախին եվրոպական մարդասիրական կազմակերպությունների կողմից օգնություն տրամադրելու ՀԲԸՄ միջոցառման ժամանակ, Արցախի ՄԻՊ Ռուբեն Մելիքյանը լրագրողների հետ զրույցի ժամանակ նշեց, որ Արցախը լինելով Եվրոպայի մաս՝ արդար չէ, որ դուրս է մնացել եվրոպական ինստիտուտների ուշադրության կենտրոնից:

Մելիքյանի խոսքով՝ 2016 թվականի ապրիլյան քառօրյան կարելի է դիտել որպես բաժանարար գիծ: «Այդ իրադարձություններից հետո արցախյան հիմնախնդիրների նկատմամբ սփյուռքյան կառույցների ուշադրության ակնհայտ մեծացում եմ տեսնում»,- ասաց Արցախի ՄԻՊ-ը, ապա հավելեց, որ իրենց ակնկալիքը Եվրոպայի ներկայությունն է Արցախում:

Ըստ նրա՝ Եվրոպական քաղաքակրթությունն արցախցիների ընտրությունն է: Նա հավելեց, որ փորձում են, որպեսզի Արցախում մարդու իրավունքները պաշտպանվեն եվրոպական չափանիշներով, և որ Արցախն իրեն Եվրոպայի մաս է զգում:

Հարցին՝ որքանո՞վ է անվտանգ այսօր թալիշցիների համար վերադառնալ իրենց բնակավայրերը, նա արձագանքեց. «Արցախի Հանրապետությունն իրենից կախված ամեն ինչ փորձում է անել, և շատ

հաճախ դա դրսևորվում է շատ կոնկրետ և հստակ ծրագրված միջոցառումներով, որպեսզի անվտանգության մակարդակը լինի հնարավորինս բարձր, բայց մենք գիտենք՝ ում հետ գործ ունենք»:

Նա նշեց, որ անվտանգությունը սև ու սպիտակ երևույթ չէ: «Չի կարելի ասել՝ Ստեփանակերտում բացարձակ անվտանգ է, Թալիշում բացարձակ վտանգավոր է: Բնականաբար, շփման գծից հեռավորությունը որոշակի ազդեցություն ունենում է անվտանգության մակարդակի վրա»:

Published on 14-Jul-2017 15:42 Original source: Yerkir.am

**[Глава европейского офиса AGBU представил детали программы «Европа во имя Арцаха»]()**



**Представители Всеобщего армянского благотворительного союза (AGBU) в ходе созванной сегодня пресс-конференции представили организованные европейским офисом AGBU акцию и сбор подписей, передает *Panorama.am*.**

Напомним, AGBU призывает Евросоюз и европейские гуманитарные организации принять участие в жизни народа Арцаха. Глава европейского офиса AGBU Никола Тавитян в беседе с журналистами представил детали программы «Европа во имя Арцаха», отметив, что их целью является способствовать содействию европейских структур и организаций народу Арцаха.

Он напомнил, что ЕС со всеми непризнанными республиками работает по программе «Вовлечение без признания», и, если общеевропейские

структуры не будут представлены в НКР, то они не смогут проводить мониторинг.

«Это гражданская инициатива, и европейцы действительно могут помочь Арцаху», – отметил Н. Тавитян.

Координатор федерации армянских организаций Бельгии Шахнур Минасян в свою очередь отметил, что сбор подписей стартовал 7 июня, на данный момент собрано 2 тысячи подписей. В данном мероприятии приняли участие около 60 общественно-гражданских деятелей, депутаты Европарламента.

«Вовлеченность Европы в Арцахе на сегодняшний день почти равна нулю. Цель данной инициативы – вовлечение европейских НПО в Арцахе, обеспечение их сотрудничества с общественными организациями НКР. Мы хотим понять, что можем сделать, хотя бы по части визитов и обмена информацией.

Предполагается также и финансовая поддержка, хотя основной целью, конечно, это не является. Если есть соответствующие европейские фонды, которые предоставляют финансовую поддержку непризнанным республикам (а таковые есть), то они оказывают поддержку Северному Кипру, Абхазии, Приднестровью и другим непризнанным республикам. Между тем, Арцах не получает от них никакого содействия», – отметил он.

Ш. Минасян также сообщил, что результаты сбора подписей и акции будут подытожены осенью сего года, однако данное мероприятие будет носить продолжительный характер. Планируется, что в рамках темы поддержки Арцаха в Европарламенте будет организована конференция.

Published on 14-Jul-2017 16:26 Original source: Golos Armenii

Lragir.am

## [ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության համաձայնագրի հաստատմանն Արցախում ներգրավվածություն ունենալու համար. Նիկոլա Դավիթյան]



Եվրոպական միությունը չպետք է սպասի խաղաղության համաձայնագրի հաստատմանը՝ Արցախում իր ներգրավվածությունն ունենալու համար: ԵՄ-ն պետք է իր հստակ քաղաքականությունն ունենա Արցախի նկատմամբ: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ հուլիսի 14-ին լրագրողների հետ կայացած հանդիպմանն այդ տեսակետը հայտնեց Հայկական բարեգործական ընդհանուր միության Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը:

«Եվրոպական միությունը դեռևս չունի հստակ քաղաքականություն Արցախի հանդեպ: Կա ընդամենը մեկ նախաձեռնություն՝ Եվրոպական համագործակցություն Ղարաբաղում խաղաղության համաձայնագրի հաստատելու համար (The European Partnership for the Peaceful Settlement of the Conflict over Nagorno-Karabakh (EPNK), որն ունի տարեկան բյուջե, և ծախսվում է համագործակցություն ստեղծելու հայերի և ադրբեջանցիների միջև: Սակայն այս ծրագիրը շատ մարտահրավերներ ունի: Նամակ էր ուղարկվել՝ իմանալու, թե որն է Եվրոպական միության քաղաքականությունը Արցախի հանդեպ, պատասխանել էին, որ Եվրոպական միությունը Արցախում կգործի միայն այն ժամանակ, երբ լինի խաղաղության համաձայնագիր»,-ասաց Նիկոլա Դավիթյանն ու հավելեց, որ ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության ՝ Արցախում գործելու համար:

ՀԲԸՄ-ի հայաստանյան գրասենյակի գործադիր տնօրեն Դալար Կազանջյանի կարծիքով ևս՝ ԵՄ-ն պետք է ունենա

քաղաքականություն  Արցախի նկատմամբ, որը պետք է շատ ավելի լայն լինի, քան EPNK-ն է:

Բելգիայի հայկական կազմակերպությունների փեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանի համոզմամբ՝ կան հայամետ գործիչներ ԵՄ-ում, որոնց ազդեցությունն անսահմանափակ չէ: «Եվ այն պատճառաբանությունը, թե կլինի խաղաղության համաձայնագիր, ու ըստ դրա իրենք կկառուցեն համագործակցությունը, բավականին թույլ է: Չպետք է սպասել խնդրի լուծմանը, այլ հիմա արդեն պետք է սկսել համագործակցությունն Արցախում»,-եզրափակեց նա:

Published on 14-Jul-2017 17:56 Original source: Lragir.am

ՄԱՄՈՒԼ.am

**Bringing Europe to Nagorno-Karabakh | ՍիվիլՆեթ**




The European Union provides aid to 150 countries around the world, including many unrecognized territories such as Northern Cyprus and Palestine. But for nearly 25 years, the population of the Nagorno-Karabakh Republic has been largely excluded from international development assistance. In June of 2017, the Armenian General Benevolent Union launched a campaign to bring the EU to Karabakh.

© Copyright of this report belongs to the Civilitas Foundation. In accordance with the editorial policy of CivilNet (the media project of the Civilitas Foundation), materials may not be reproduced, distributed, transmitted, displayed, published or

broadcast without the prior consent of CivilNet. You may not alter or remove any trademark, copyright or other notice from copies of the content.

Published on 14-Jul-2017 18:24 Original source: Mamul.am

ՀԱՅԱՑՔ
ԼՐԱՏՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության՝ Արցախում գործելու համար. ՀԲԸՄ Եվրոպայի տնօրեն



Եվրոպական միությունը չպետք է սպասի խաղաղության համաձայնագրի հաստատմանը՝ Արցախում իր ներգրավվածությունն ունենալու համար: ԵՄ-ն պետք է իր հստակ քաղաքականությունն ունենա Արցախի նկատմամբ: Այսօր լրագրողների հետ կայացած հանդիպմանն այդ տեսակետը հայտնեց Հայկական բարեգործական ընդհանուր միության Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը:

«Եվրոպական միությունը դեռևս չունի հստակ քաղաքականություն Արցախի հանդեպ: Կա ընդամենը մեկ նախաձեռնություն՝ Եվրոպական համագործակցություն Ղարաբաղում խաղաղության համաձայնագրի հաստատելու համար (The European Partnership for the Peaceful Settlement of the Conflict over Nagorno-Karabakh (EPNK), որն ունի տարեկան բյուջե, և ծախսվում է համագործակցություն ստեղծելու հայերի և ադրբեջանցիների միջև: Սակայն այս ծրագիրը շատ մարտահրավերներ ունի: Նամակ էր ուղարկվել՝ իմանալու, թե որն է Եվրոպական միության քաղաքականությունը Արցախի հանդեպ, պատասխանել էին, որ Եվրոպական միությունը Արցախում կգործի միայն այն ժամանակ, երբ լինի խաղաղության համաձայնագիր»,-ասաց Նիկոլա Դավիթյանն ու հավելեց, որ ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության՝ Արցախում գործելու համար:

ՀԲԸՄ-ի հայաստանյան գրասենյակի գործադիր տնօրեն Դալար Կազանջյանի կարծիքով ևս՝ ԵՄ-ն պետք է ունենա քաղաքականություն Արցախի նկատմամբ, որը պետք է շատ ավելի լայն լինի, քան EPNK-ն է:

Բելգիայի հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Ծահնուր Մինասյանի համոզմամբ՝ կան հայամետ գործիչներ ԵՄ-ում, որոնց ազդեցությունն անսահմանափակ չէ: «Եվ այն պատճառաբանությունը, թե կլինի խաղաղության համաձայնագիր, ու ըստ դրա իրենք կկառուցեն համագործակցությունը, բավականին թույլ է: Չպետք է սպասել խնդրի լուծմանը, այլ հիմա արդեն պետք է սկսել համագործակցությունն Արցախում»,-եզրափակեց նա:

Published on 14-Jul-2017 20:37 Original source: Hayacq

ՀԱՅ ՄԵԴԻԱ.AM
«Հայոց Աշխարհ» օրաթերթ

**ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության համաձայնագրի հաստատմանն Արցախում ներգրավվածություն ունենալու համար. Նիկոլա Դավիթյան**



Եվրոպական միությունը չպետք է սպասի խաղաղության համաձայնագրի հաստատմանը՝ Արցախում իր ներգրավվածությունն ունենալու համար: ԵՄ-ն պետք է իր հստակ քաղաքականությունն ունենա Արցախի նկատմամբ: Հուլիսի 14-ին լրագրողների հետ կայացած հանդիպմանն այդ տեսակետը հայտնեց Հայկական բարեգործական ընդհանուր միության Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը:

**«Եվրոպական միությունը դեռևս չունի հստակ քաղաքականություն Արցախի հանդեպ: Կա ընդամենը մեկ նախաձեռնություն՝ Եվրոպական համագործակցություն Ղարաբաղում խաղաղության համաձայնագրի հաստատելու համար (The European Partnership for the Peaceful Settlement of the Conflict over Nagorno-Karabakh (EPNK), որն ունի տարեկան բյուջե, և ծախսվում է համագործակցություն ստեղծելու հայերի և ադրբեջանցիների միջև: Սակայն այս ծրագիրը շատ մարտահրավերներ ունի: Նամակ էր ուղարկվել՝ իմանալու, թե որն է Եվրոպական միության քաղաքականությունը Արցախի հանդեպ, պատասխանել էին, որ Եվրոպական միությունը Արցախում կգործի միայն այն ժամանակ, երբ լինի խաղաղության համաձայնագիր»**,-ասաց Նիկոլա Դավիթյանն ու հավելեց, որ ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության ՝ Արցախում գործելու համար:

ՀԲԸՄ-ի հայաստանյան գրասենյակի գործադիր տնօրեն Դալար Կազանջյանի կարծիքով ևս՝ ԵՄ-ն պետք է ունենա քաղաքականություն Արցախի նկատմամբ, որը պետք է շատ ավելի լայն լինի, քան EPNK-ն է:

Բելգիայի հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանի համոզմամբ՝ կան հայամետ գործիչներ ԵՄ-ում, որոնց ազդեցությունն անսահմանափակ չէ: «Եվ այն պատճառաբանությունը, թե կլինի խաղաղության համաձայնագիր, ու ըստ դրա իրենք կկառուցեն համագործակցությունը, բավականին թույլ է: Չպետք է սպասել խնդրի լուծմանը, այլ հիմա արդեն պետք է սկսել համագործակցությունն Արցախում»,-եզրափակեց նա:

Published on 14-Jul-2017 20:30 Original source: HayMedia

Orer.am
Լրատվական կայք

## ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության համաձայնագրի հաստատմանն Արցախում ներգրավվածություն ունենալու համար. Նիկոլա Դավիթյան



Եվրոպական միությունը չպետք է սպասի խաղաղության համաձայնագրի հաստատմանը՝ Արցախում իր ներգրավվածությունն ունենալու համար: ԵՄ-ն պետք է իր հստակ քաղաքականությունն ունենա Արցախի նկատմամբ:

Հուլիսի 14-ին լրագրողների հետ կայացած հանդիպմանն այդ տեսակետը հայտնեց Հայկական բարեգործական ընդհանուր միության Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը:

«Եվրոպական միությունը դեռևս չունի հստակ քաղաքականություն Արցախի հանդեպ: Կա ընդամենը մեկ նախաձեռնություն՝ Եվրոպական համագործակցություն Ղարաբաղում խաղաղության համաձայնագրի հաստատելու համար (The European Partnership for the Peaceful Settlement of the Conflict over Nagorno-Karabakh (EPNK), որն ունի տարեկան բյուջե, և ծախսվում է համագործակցություն ստեղծելու հայերի և ադրբեջանցիների միջև: Սակայն այս ծրագիրը շատ մարտահրավերներ ունի:

Նամակ էր ուղարկվել՝ իմանալու, թե որն է Եվրոպական միության քաղաքականությունը Արցախի հանդեպ, պատասխանել էին, որ Եվրոպական միությունը Արցախում կգործի միայն այն ժամանակ, երբ լինի խաղաղության համաձայնագիր»,-ասաց Նիկոլա Դավիթյանն ու հավելեց, որ ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության ՝ Արցախում գործելու համար:

ՀԲԸՄ-ի հայաստանյան գրասենյակի գործադիր տնօրեն Դալար Կազանջյանի կարծիքով ևս՝ ԵՄ-ն պետք է ունենա քաղաքականություն Արցախի նկատմամբ, որը պետք է շատ ավելի լայն լինի, քան EPNK-ն է:

Բելգիայի հայկական կազմակերպությունների փեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանի համոզմամբ՝ կան հայամետ գործիչներ ԵՄ-ում, որոնց ազդեցությունն անսահմանափակ չէ:

«Եվ այն պատճառաբանությունը, թե կլինի խաղաղության համաձայնագիր, ու ըստ դրա իրենք կկառուցեն համագործակցությունը, բավականին թույլ է: Չպետք է սպասել խնդրի լուծմանը, այլ հիմա արդեն պետք է սկսել համագործակցությունն Արցախում»,-եզրափակեց նա:

Published on 14-Jul-2017 20:26 Original source: Orer.am

ՓԱՍՏ www.past.am Տեղեկատվական գործակալություն

**ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության համաձայնագրի հաստատմանն Արցախում ներգրավվածություն ունենալու համար. Նիկոլա Դավիթյան**



Եվրոպական միությունը չպետք է սպասի խաղաղության համաձայնագրի հաստատմանը՝ Արցախում իր ներգրավվածությունն ունենալու համար: ԵՄ-ն պետք է իր հստակ քաղաքականությունն ունենա Արցախի նկատմամբ: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ հուլիսի 14-ին լրագրողների հետ կայացած հանդիպմանն այդ տեսակետը հայտնեց Հայկական բարեգործական ընդհանուր միության Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանը:

«Եվրոպական միությունը դեռևս չունի հստակ քաղաքականություն Արցախի հանդեպ: Կա ընդամենը մեկ նախաձեռնություն՝ Եվրոպական համագործակցություն Ղարաբաղում խաղաղության համաձայնագրի հաստատելու համար (The European Partnership for the Peaceful Settlement of the Conflict over Nagorno-Karabakh (EPNK), որն ունի տարեկան բյուջե, և ծախսվում է համագործակցություն ստեղծելու հայերի և ադրբեջանցիների միջև: Սակայն այս ծրագիրը շատ մարտահրավերներ ունի: Նամակ էր ուղարկվել՝ իմանալու, թե որն է Եվրոպական միության քաղաքականությունը Արցախի հանդեպ, պատասխանել էին, որ Եվրոպական միությունը Արցախում կգործի միայն այն ժամանակ, երբ լինի խաղաղության համաձայնագիր»,-ասաց Նիկոլա Դավիթյանն ու հավելեց, որ ԵՄ-ն չպետք է սպասի խաղաղության ՝ Արցախում գործելու համար:

ՀԲԸՄ-ի հայաստանյան գրասենյակի գործադիր տնօրեն Դալար Կազանջյանի կարծիքով ևս՝ ԵՄ-ն պետք է ունենա քաղաքականություն Արցախի նկատմամբ, որը պետք է շատ ավելի լայն լինի, քան EPNK-ն է:

Բելգիայի հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանի համոզմամբ՝ կան հայամետ գործիչներ ԵՄ-ում, որոնց ազդեցությունն անսահմանափակ չէ: «Եվ այն պատճառաբանությունը, թե կլինի խաղաղության համաձայնագիր, ու ըստ դրա իրենք կկառուցեն համագործակցությունը, բավականին թույլ է: Չպետք է սպասել խնդրի լուծմանը, այլ հիմա արդեն պետք է սկսել համագործակցությունն Արցախում»,-եզրափակեց նա:

Published on 14-Jul-2017 19:40 Original source: Past

Հայաստանի Հանրապետություն
"Hayastany Hanrapetutyun" armenian daily

# Արցախին անհրաժեշտ է Եվրոպայի ներգրավվածությունը

Հայկական բարեգործական ընդհանուր միության նախաձեռնած Եվրոպայի ստորագրահավաք—արշավը եվրոպական կազմակերպություններին կներգրավի Արցախի ժողովրդի կյանքում: Ակնկալվում են փոխայցելություններ, տեղեկատվության փոխանակում, ինչպես նաեւ ֆինանսական աջակցություն: Ստորագրահավաքին արդեն միացել են 2000 մարդ, որոնց թվում են 60 հասարակական—քաղաքական ճանաչված դեմքեր, եվրախորհրդարանի պատգամավորներ: «Ամենեւին արդար չէ, որ Եվրոպայի մաս հանդիսացող Արցախը դուրս մնա եվրոպական ինստիտուտների ուշադրությունից»,–Արցախին եվրոպական մարդասիրական կազմակերպությունների կողմից օգնություն տրամադրելու ՀԲԸՄ միջոցառման ժամանակ լրագրողների հետ զրույցում նշել է Արցախի մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը՝ ընդգծելով, որ Եվրոպայի ներգրավվածությունը կարեւոր է առաջին հերթին քաղաքական առումով:

Նրա խոսքով, 2016 թվականի ապրիլյան դեպքերը պետք է ընդունել որպես բաժանարար գիծ. «Այդ իրադարձություններից հետո արցախյան հիմնախնդիրների նկատմամբ սփյուռքյան կառույցների ուշադրության ակնհայտ մեծացում եմ տեսնում: Դա, մասնավորապես, վերաբերում է Հայկական բարեգործական ընդհանուր միությանը»: Հարցին՝ արդյոք Արցախում մարդու իրավունքները պաշտպանվո՞ւմ են եվրոպական չափորոշիչներին համապատասխան, Ռուբեն Մելիքյանը պատասխանել է. «Մենք գոնե փորձում ենք: Մեր հնարավորությունների

սահմանում անընդհատ փորձում ենք իրավական դիրքորոշումներն արտահայտել, հղում անել եվրոպական իրավապաշտպան համակարգին: 2015 թվականից Արցախն իր համար պարտադիր համարեց մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան»:

Անդրադառնալով Թալիշում բնակվողների համար վտանգավորության խնդրին՝ նա նշել է. «Չի կարելի ասել՝ Ստեփանակերտում բացարձակ անվտանգ է, Թալիշում բացարձակ վտանգավոր է, այդպես չէ: Բնականաբար, շփման գծից հեռավորությունը որոշակի ազդեցություն ունենում է անվտանգության մակարդակի վրա»:

«Արցախում այսօր միջազգային կազմակերպությունների ներգրավվածություն գրեթե չկա: Ստորագրահավաքի բուն նպատակը գումարային աջակցությունը չէ, այլ եվրոպական կազմակերպությունների ներգրավվածությունը Արցախի հասարակության կյանքում, ՀԿ—ների համագործակցությունը: Տեղեկատվության հասանելիության առումով եւս աշխատանքներ կան իրականացնելու, քանի որ Եվրոպայում շատ քչերը գիտեն Արցախի մասին: Փորձում ենք ԶԼՄ—ների միջոցով լուսաբանել, որ գոյություն ունի Արցախի Հանրապետություն, կան հասարակական ակտիվ գործունեություն ծավալող կառույցներ, որոնք ունեն համագործակցության կարիք»,–ասել է Բելգիայի հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանն ու հավելել, որ առաջարկելու են փոխայցելություններ, ՀԿ—ների համագործակցություն:

ՀԲԸՄ Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանի խոսքով՝ Եվրամիությունը դերակատարություն ունի շատ այլ չճանաչված երկրներում՝ Հյուսիսային Կիպրոսում, Աբխազիայում: Կան հիմնադրամներ, որոնք աջակցում են այդ երկրներին, սակայն Արցախը չի ստանում նման աջակցություն: «Մենք ուզում ենք փոխել այս վիճակը եւ օժանդակություն բերել նաեւ Արցախի ժողովրդին»,–նշել է նա:

Ֆրանսիայի հայ համայնքը եւս ակտիվ աշխատանք է նախատեսում Արցախի ճանաչման ուղղությամբ: Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի համանախագահ, ՀՅԴ բյուրոյի անդամ Մուրադ Փափազյանը նշել է, որ նախատեսում են ընդլայնել Արցախի շուրջ համախմբված միջազգային գործիչների թիվը:

«Ինչպես գիտեք, Ալֆորվիլ քաղաքը ստորագրեց համաձայնագիր Արցախի Բերձոր համայնքի հետ: Սա նշանակում է, որ ֆրանսիական քաղաքը ճանաչում է Բերձորը որպես հայկական քաղաք: Սա շատ կարեւոր նշանակություն ունի: Պետք է այնպես անել, որ նման օրինակները շատ լինեն: Երբ ունենանք Ֆրանսիայի 20—25 քաղաք, որ համագործակցության համաձայնագրեր են կնքել Արցախի քաղաքների հետ, ապա կարող ենք ասել, որ մեր գործում առաջ ենք գնացել: Սա կարող է օգնել, որ Արցախը ճանաչվի որպես անկախ հանրապետություն»,—ասել է Մուրադ Փափազյանը: Նրա խոսքով, մինչ այժմ լուրջ աշխատանք է տարվել, եւ այն շարունակվելու է, որ Ֆրանսիայում Արցախն ունենա քաղաքական համակրանք: Շարունակելու ենք համախմբել ազդեցիկ քաղաքական գործիչների՝ կառավարության, նախագահի, պատգամավորների մոտ այդ գիծն առաջ տանելու համար: «Ես լուրջ կապեր ունեմ դիվանագիտական քաղաքական, կառավարական միջավայրում եւ կարող եմ ասել, որ Թուրքիան, Ադրբեջանը չեն կարող ֆրանսիացիներին խաբել: Իրենք շատ լավ գիտեն, թե ինչ է Թուրքիայում կատարվում, գիտեն, թե ինչ է Ալիեւի ռեժիմը: Ալիեւի ռեժիմը ժողովրդականություն չի վայելում Ֆրանսիայում: Բոլորն էլ գիտեն, որ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ կապերը շատ հեռու չեն կարող գնալ: Մենք պետք է այս իրավիճակն օգտագործենք դեպի մեր հաջողությունները: Այս հարցում Էրդողանն ու Ալիեւը մեզ բավական օգնում են»,–ասել է Մուրադ Փափազյանը:

Նա նկատել է, որ Ֆրանսիայում շատ լավ տեղյակ են ղարաբաղյան խնդրից: Իրենք գիտեն, որ Ադրբեջանը չի ցանկանում խաղաղություն հաստատել, գիտեն, որ Ադրբեջանն է ուզում զենքով խնդիրը լուծել: «Հեռու չէ այն օրը, որ որոշում լինի արցախյան հարցի հետ կապված: 1994—ից ի վեր այսպիսի վիճակն անընդունելի է ժողովուրդների համար»,– նշել է նա:

**Ա. ԽՈՍՐՈՎՅԱՆ**

Published on 15-Jul-2017 19:40 Original source: Hayastani Hanrapetutyun

ՄԻՏՔ.am Լրատվական - Վերլուծական կայք

**ՀԲԸՄ-ի առաքելությունը կհաջողի, եթե Արցախը մոտեցնի Եվրոպային**



Հայ Բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նախաձեռնությամբ մեկնարկել է ստորագրահավաք-արշավ, որը կոչ է անում Եվրամիությանը և եվրոպական մարդասիրական կազմակերպություններին ներգրավվել Արցախի ժողովրդի կյանքում: Այդ մասին այսօր ՀԲԸՄ կողմից անցկացվող հանրային քննարկման ժամանակ հայտարարել են նախաձեռնողները:

Եվրոպական կառույցները, որպես կանոն, ներկա են այն երկրներում հասարակությունների կյանքում, ովքեր արևմտյան արժեհամակարգով ապրելու ցանկություն ունեն, պայքարում են ժողովրդավարության և ազատության համար: ՀԲԸՄ-ի նախաձեռնությունը, անշուշտ, ողջունելի է՝ հենց թեկուզ այն պատճառով, որ Արցախին և նրա հասարակությանը ցույց է տրվում զարգացման ճանապարհի այլընտրանք, որովհետև մեր իրականությունը լեցուն է ռուսական տարբեր նախաձեռնություններով, որոնք, ըստ էության, որևէ աղերս չունեն քաղաքացիականության և զարգացման հետ:

Մյուս կողմից՝ կենացային է հնչում Արցախի ժողովրդի կյանքում ներգրավելու եվրոպացիներին ուղղված կոչը հենց այն օրերին, երբ ԼՂՀ-ն ինքն է փակում իր զարգացման եվրոպական պատուհանը: Խոսքը, մասնավորապես, Բակո Սահակյանի նախագահության ժամկետը երկարաձգելու որոշման մասին է:

Խնդիրը Բակո Սահակյանը չէ: Ի վերջո, ամենաժողովրդավարական երկրներում անգամ՝ գտնվում են մարդիկ, ովքեր տարվում են իշխանության գայթակղությամբ, ունենում են ավտորիտար հակումներ: Սակայն ժողովրդավարական հասարակությունների ուժը հենց նրանում է, որ նրանք ստեղծել են մեխանիզմներ, գործիքներ, որոնց միջոցով կանխում են առանձին մարդկանց կամ խմբերի իշխանատենչական հակումները: Արցախը, դժբախտաբար, այս տարիների ընթացքում պետական և քաղաքական համակարգերը կայացրել է միայն թղթի վրա՝ դրանց բովանդակային չգոյությամբ ճանապարհ հարթելով ժողովրդավարության մարտահրավերների համար: Տխուր է տեսնել, որ այս օրերին Արցախում իշխանության հավերժացման կամ երկարաձգման դեմ պայքարում են ընդամենը նվազ հնարավորություններ ունեցող մեկ կուսակցություն, մեկ պատգամավոր ու մի քանի փորձագետ: Հասարակությունը կորցրել է դիմադրելու ռեսուրսը, ինչը շատ վտանգավոր է ոչ այնքան ներքաղաքական համատեքստում, որքան՝ արտաքին մարտահրավերների իրական առկայության պայմաններում:

ՀԲԸՄ-ի առաքելությունը կհաջողի, եթե կազմակերպությունը ոչ թե եվրոպացիներին բերի Արցախ, որտեղ այս պահին նրանց ոչ ոք չի սպասում, այլ Արցախը մոտեցնի Եվրոպային՝ այդպիսով նաև նրան անշրջելիորեն հեռացնելով ասիական ճահճում խեղդվող Ադրբեջանից:

Published on 15-Jul-2017 00:00 Original source: Mitq.am

# «Մարդու իրավունքների տեսանկյունից՝ որևէ նշանակություն չունի քաղաքական համակարգը». Արցախի ՄԻՊ



«Քաղաքական գործունեություն չեմ իրականացրել, մոտակա ժամանակներս չեմ պատրաստվում իրականացնել»,- այսօր լրագրողների հետ զրույցում ասաց Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը:

Լրագրողներից մեկի հարցին, թե՝ կար ժամանակ, երբ Արցախում ընդդիմության ներկայացուցիչն ընտրվում էր Ստեփանակերտի քաղաքապետ, իսկ հիմա Սահմանադրություններ են փոխվում, որպեսզի նախագահի պաշտոնավարումը երկարաձգվի, սա չի՞ խանագրում եվրոպական քաղաքակրթության մաս դառնալուն, Ռ. Մելիքյանն այսպես պատասխանեց. «Դա ձեր մոտեցումն է: Իմ մանդատը մարդու իրավունքներն են, ես մշտապես զբաղվել եմ մարդու իրավունքներով և շարունակելու եմ զբաղվել մարդու իրավունքներով. քաղաքական գործունեություն չեմ իրականացրել, մոտակա ժամանակներս չեմ պատրաստվում իրականացնել»:

Ռ. Մելիքյանի խոսքով՝ մարդու իրավունքների տեսանկյունից՝ որևէ նշանակություն չունի քաղաքական համակարգը. «Մարդու իրավունքները նույն ստանդարտը կարող են ունենալ թե՛ նախագահական, թե՛ պառլամենտական հանրապետություններում, թե՛ միապետություններում, և այլն: Մարդու իրավունքների խնդիրը ես կտարբերակեի»:

**Մանրամասները՝ 168.am-ի տեսանյութում:**



Published on 14-Jul-2017 13:16 Original source: https://168.am/2017/07/14/819415.html

168hours news and analysis

# Արցախի ՄԻՊ-ը՝ թալիշցիների վերադառնալու վտանգավորության մասին



Այսօր լրագրողները Արցախի մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանից հետաքրքրվեցին, թե ինչքանո՞վ է անվտանգ այսօր թալիշցիների համար՝ վերադառնալ իրենց բնակավայրերը:

Ի պատասխան՝ Ռ. Մելիքյանն ասաց. «Արցախի Հանրապետությունն իրենից կախված ամեն ինչ փորձում է անել, և շատ հաճախ դա դրսևորվում է շատ կոնկրետ և հստակ ծրագրված միջոցառումների միջոցով, որ անվտանգության մակարդակը լինի հնարավորինս բարձր, բայց մենք գիտենք՝ ում հետ գործ ունենք»:

Լրագրողի ճշտող հարցին՝ այսինքն՝ այդքան էլ անվտանգ չէ՞, Արցախի ՄԻՊ-ն այսպես պատասխանեց. «Անվտանգությունը սև ու սպիտակ երևույթ չէ, չի կարելի ասել՝ Ստեփանակերտում բացարձակ անվտանգ է, Թալիշում բացարձակ վտանգավոր է, այդպես չէ: Բնականաբար, շփման գծից հեռավորությունը որոշակի ազդեցություն ունենում է անվտանգության մակարդակի վրա»:

**Մանրամասները՝ 168.am-ի տեսանյութում:**



Published on 14-Jul-2017 13:27 Original source: https://168.am/2017/07/14/819427.html

168hours
news and analysis

# «Ամենևին արդար չէ, որ Արցախը դուրս է մնացել եվրոպական ինստիտուտների ուշադրության կենտրոնից». Ռուբեն Մելիքյան




«Այսօր Արցախում Եվրոպայի և ընդհանրապես բոլոր միջազգային կառույցների ներգրավվածությունը հավասար է զրոյի, այդ առումով մենք բավական անելիք ունենք, և հենց այս նախաձեռնության բուն նպատակը դրանում է կայանում»,- այսօր լրագրողների հետ զրույցում ասաց Բելգիայի Հայկական կազմակերպությունների ֆեդերացիայի ընդհանուր համակարգող Շահնուր Մինասյանը:

Նշենք, որ Հայաստանի ընդհանուր բարեգործական միությունը (ՀԲԸՄ) մեկնարկել է ստորագրահավաք-արշավ՝ կոչ անելով Եվրամիությանը և եվրոպական մարդասիրական կազմակերպություններին՝ ներգրավվել Արցախի ժողովրդի կյանքում:

**168.am**-ի հարցին, թե՝ նրանց ներգրավվածությունը միայն ֆինանսական առումո՞վ է լինելու, Շ. Մինասյանը պատասխանեց. «Ո՛չ միայն ֆինանսական, բայց ինչո՞ւ չէ, նաև ֆինանսական: Առաջարկելու ենք այցելություններ, հասարակական կառույցների համագործակցություն, նաև փոխայցելություններ»:

ՀԲԸՄ-ի ղեկավար Դալար Կազանջյանը նշեց, որ իրենց նպատակն այն է, որ Արցախի ժողովուրդը բարեկեցիկ կյանք ունենա, որ Արցախը զարգանա. «Մենք աշխատում ենք տարբեր կողմերի հետ, որպեսզի հասնենք այդ նպատակին, իրականացնենք մեր ստրատեգիան: Մենք ուզում ենք, որ Ղարաբաղյան հարցը դրվի միջազգային քննարկման»:

Արցախի մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանն էլ ասաց, որ Եվրոպայի ներգրավվածությունը կարևոր է առաջին հերթին՝ քաղաքակրթական պատճառներով. «Արցախը, լինելով Եվրոպայի մաս, ամենևին արդար չէ, որ դուրս է մնացել եվրոպական ինստիտուտների, այդ թվում նաև՝ մարդու իրավունքների ինստիտուտների ուշադրության կենտրոնից»:

Հարցին, թե արդյոք այս վերջին սահմանային սրացումները նպաստեցի՞ն այս ստորագրահավաքի մեկնարկին, Ռ. Մելիքյանն այսպես պատասխանեց. «Ես կարծում եմ՝ կարելի է 2016 թվականի ապրիլյան դեպքերը դիտել՝ որպես բաժանարար գիծ, և

դրանից հետո ես ակնհայտ տեսնում եմ մեր սփյուռքյան կառույցների ուշադրության մեծացումն Արցախի հիմնախնդրի հետ կապված: Ես հատկապես կարևորում եմ իրավապաշտպան կառույցների առկայությունն Արցախում: Ես վստահ եմ, որ դա իր շատ մեծ դրական դերը կունենա խաղաղության տեսանկյունից»:

Լրագրողներից մեկ հարցին էլ, թե արդյոք այսօր Արցախում մարդու իրավունքները պաշտպանվո՞ւմ են եվրոպական չափանիշերին համապատասխան, Արցախի ՄԻՊ-ը պատասխանեց, որ իրենք փորձում են ամեն ինչ անել այդ ուղղությամբ. «Մենք, լինելով չճանաչված պետություն, ամեն ինչ անում ենք, որպեսզի այս ուղղությամբ քայլեր ձեռնարկենք, որովհետև սա մեզ է պետք, որովհետև մենք մեզ Եվրոպայի մաս ենք զգում»:

ՀՅԴ Եվրոպայի տնօրեն Նիկոլա Դավիթյանն էլ նշեց, որ իրենց նպատակն է, որ Եվրոպական միության պաշտոնյաները կարողանան գնալ Արցախ և օժանդակություն բերեն ժողովրդին. «Դա սկսել ենք հունիս ամսից, դիմել ենք բոլոր ԵՄ կառույցներին: ԵՄ-ն ունի մի քաղաքականություն, որը կոչվում է հարաբերություններ՝ առանց ճանաչման: Մարդու իրավունքների տեսանկյունից այնտեղ խնդիրներ կան, պատերազմ կա, և պետք է կարողանալ ամեն ինչ անել, որ ԵՄ կառույցները կարողանան գնալ ու մոնիտորինգ անել»:

Նշենք, որ մինչև հիմա ստորագրահավաքին միացել է մոտավորապես 2000 եվրոպացի:

**Մանրամասները՝ 168.am-ի տեսանյութում:**




Published on 14-Jul-2017 15:32 Original source: https://168.am/2017/07/14/819501.html




## [Բելգիայի հայկական կազմակերպությունների ընդհանուր համակարգող Ծահնուր Մինասյանը հյուրընկալվեց Սփյուռքի նախարարությունում]



ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հուլիսի 18-ին ընդունեց Բելգիայի հայկական կազմակերպությունների ընդհանուր համակարգող, ՀԲԸՄ Եվրոպայի կառույցի ներկայացուցիչ Ծահնուր Մինասյանին:

Ջերմորեն ողջունելով հյուրին՝ նախարարը բարձր գնահատեց Եվրոպայի երկու հայկական կառույցների գործունեությունը, որն ուղղված է Արցախի անկախության ճանաչմանը, հայկական խնդիրների լուծմանը, ակտիվ հայ երիտասարդների ներուժի համախմբմանը: Նա կարևորեց տարածաշրջանային կառույցների ձևավորումն ու դրանց համահայկական ցանցի ստեղծումը:

Ծահնուր Մինասյանը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար և նշեց, որ այժմ երկու կառույցների գործունեությունն էլ ուղղված է «Մենք ուզում ենք Եվրոպա Արցախում» ծրագրի իրականացմանը: Նախապատրաստական աշխատանքները սկսվել են փետրվարին, պատրաստվել են նամակներ՝ ուղղված եվրոպական բոլոր կառույցներին: Նա նշեց, որ ի պաշտպանություն Արցախի, հունիսի 7-ից սկսվել է ստորագրահավաք, կազմակերպվել է մամուլի ասուլիս և հանրային քննարկում՝ ներկայացնելու ՀԲԸՄ Եվրոպայի ստորագրահավաք-արշավը՝ կոչ անելով Եվրամիությանը և Եվրոպական մարդասիրական կազմակերպություններին ներգրավվել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) ժողովրդի կյանքում:

Ծ. Մինասյանը նշեց. «Արցախը միակ չճանաչված պետությունն է, որտեղ ԵՄ-ն օգնություն չի տրամադրում՝ ի տարբերություն այլ վիճահարույց տարածքների, ինչպիսիք են Աբխազիան, Մերձդնեստրն ու Հյուսիսային Կիպրոսը, որոնք զգալիորեն շահել են ԵՄ ներգրավումից և օգնությունից»:

ԵՄ-ի ներգրավվածությունը կօգնի Արցախի Հանրապետության խաղաղ բնակչության կարիքների բավարարմանը, մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների զարգացմանը՝ նպաստելով տարածաշրջանում խաղաղության և անվտանգության հաստատմանը:

Փոխել Եվրամիության դիրքորոշումը Արցախի վերաբերյալ հնարավոր է: Հունիսի 7-ին ՀԲԸՄ Եվրոպային մեկնարկած ստորագրահավաք-արշավին միացել է ավելի քան 1400 եվրոպացի, այդ թվում՝ 60-ից ավելի հասարակական գործիչներ գիտության և արվեստի, քաղաքականության և հանրային բնագավառներից:

ՀԲԸՄ Եվրոպան հրապարակել է տեսանյութ և տեղեկատվական փաթեթ, որի նպատակն է բացատրել ԵՄ ներգրավվածության անհրաժեշտությունը Արցախում»:

Քննարկվեցին Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի կազմակերպչական և բովանդակային խնդիրներ, եվրոպական երկրների երիտասարդության մասնակցության հետ կապված հարցեր:

Published on 18-Jul-2017 Original source: http://hayernaysor.am/archives/254164#.WW4XsVaXJwo.facebook